

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՍՈՒՍԱՆՆԱ ԽՈՒՐՇՈՒԴԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մ. Գ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մ.Ա.ԴԱՐԱՔՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. սեպտեմբերի 22-ին ժամը 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. օգոստոսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա. Ա. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը.

Գլոբալացման և ժամանակակից բարձր տեխնոլոգիաների դարաշրջանում փոխվում է կրթության դերն ու նշանակությունը: Բոլոնիայի գործընթացի արդյունքում տեղի ունեցող կրթական բարեփոխումները տեղ են գտել ՀՀ կրթական համակարգի տարբեր պաշտոնական փաստաթղթերում և ծրագրերում: Կրթության միջազգայնացումը, բարձրագույն կրթության ոլորտում համադրելի կրթական համակարգերի ստեղծումը, որակավորումների համաեվրոպական շրջանակը վերջին տասնամյակների այն մեծ նվաճումներն են, որոնք տանում են դեպի բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածք: Համաշխարհային զարգացման միտումները, լեզվական ու մշակութային բազմազանությունը, ինչպես նաև համապարփակ ինտեգրման գործընթացը՝ որպես ժամանակակից լեզվակրթության հրամայական, հանգեցրել են լեզվակրթության համակարգում հիմնական հայեցակարգային դրույթների փոփոխության անհրաժեշտության:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի պատմությունը վկայում է, թե ինչպես են տարբեր մեթոդական համակարգերում կոնկրետ մոտեցումներ ձևավորվել: Նորմատիվ քերականության ուսուցման մեթոդիկայում կիրառվել են թե՛ ներակա (immanent), թե՛ համեմատական, թե՛ «ուղիղ», թե՛ թարգմանական, թե՛ հաղորդակցական մեթոդները: Մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները բավականին լավ են յուրացնում նորմատիվ քերականությունը, սակայն դժվարությամբ են գործածում քերականական երևույթները տարբեր խոսքային իրադրություններում:

Մասնագիտական մեթոդաբանական գրականության մեջ քննարկվող թեմայի շուրջ կուտակված է որոշակի փորձ. կարևորվում են հատկապես մեթոդական և լեզվաբանական տիպականացմանը (Մ.Գ. Աստվածատրյան (2010), (2015), Ն.Բ. Գասպարյան (2006), Գ.Լ. Դանիելյան (2007), Ի. Կ. Կարապետյան (2008), Լ. Հ. Տոնոյան (2008), Ա. Լ. Վարդանյան (2008), Վ.Դ. Аракин (2008), И.М. Берман (1994), В.А. Бухбиндер (1986), И.В. Рахманов (1956), (1972), Г. Э. Хельбиг (1976), В.С. Цетлин (1961), (1966), С.Ф. Шатилов (1985) և այլք), ինչպես նաև քերականական նվազագույնին (В.Г. Гак (2002), А.Л. Зеленецкий (2004) և այլք) նվիրված աշխատանքները: Առանձնահատուկ նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են հաղորդակցական քերականության հիմնախնդրին (Լ. Հ. Տոնոյան (2009), И.Л. Бим (1988), В.В. Бузаров (2001), Л.И. Карпова (2006), П.Г. Курбанова (2010), Е.В. Лобкова (2009), Р.П. Мильруд (2002), В.В. Сафонова (2004), Шатилов (1971), А.В. Щепилова (2005), S. Belasko, D. Wilkins (1972), R.A. Carter and McCarthy (2010), G. Leech and J.A. Svartvik (2002), D.A. Newby (2006), В.Н.Е. Palmer and F.G. Blandford (1969) և այլք):

Վերոնշյալ աշխատությունները մեծ ներդրում ունեն օտար լեզուների քերականության ուսուցման և ուսումնառության բարելավման գործում, *սակայն*

դրանցում պատշաճ քննության չեն առնվել իրադրային քերականության հիմնախնդիրները, հարկապես չէին կարող արժևորվել ազգային բուհում քերականության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները: Հարկ է նաև նշել ՀՀ-ում տվյալ թեմային նվիրված հետազոտությունների սակավությունը:

Հետազոտության հիմնախնդրի լուծումը կարող է նպաստել առկա հակասությունների հաղթահարմանը.

- մասնագիտական կոմպետենտ կադրերի պատրաստման անհրաժեշտության և գործող ավանդական մոտեցումների,

- ուսանողներին ներկայացվող լեզվի բազմամակարդակ տիրապետման ծրագրային պահանջների և քերականության ավանդական ուսուցման մեթոդների (ի տարբերություն կոմպետենտային, գործաբանական, կառուցվածքային-գործառական և խոսութային մոտեցման),

- անգլերենի քերականության ուսուցման հաղորդակցական-ճանաչողական մոտեցման և նորմատիվ-ձևական քերականության ուսուցման միջև:

Այսպիսով՝ *թեմայի արդիականությունը* պայմանավորված է՝

- խնդրո առարկայի վերաբերյալ նշված առկա հակասություններով,

- Հայաստանի Հանրապետության բուհերում իրադրային քերականության ուսուցման և ուսումնառության հիմնահարցի վերաբերյալ մեթոդական հետազոտությունների սակավությամբ,

- Իրադրային քերականության հաղորդակցական-ճանաչողական և միջմշակութային հարացույցի մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի մշակումն ու զարգացումը՝ հաշվի առնելով ազգային լսարանում օտար լեզուների ուսուցման տիպական դժվարությունները:

Հետազոտության օբյեկտը բուհերի անգլերենի մասնագիտական դասընթացում քերականության ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան բուհերի մասնագիտական դասընթացում անգլերենի իրադրային քերականության ուսուցման և քերականական մեխանիզմների ձևավորման մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը.

Անգլերենի իրադրային քերականության ուսուցումը հնարավոր է արդյունավետ դարձնել, եթե

- իրադրային քերականության ուսուցման և ուսումնառության գործընթացը կառուցվի՝ հիմք ընդունելով հաղորդակցական-լեզվական կոմպետենցիայի ընդհանուր գաղափարը,

- մասնագիտական դասընթացում կիրառվի քերականության ուսուցման նոր մոդել՝ հիմնված համաեվրոպական սկզբունքների և հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների վրա,

- հաշվի առնվեն հայերենի և անգլերենի իրադրային քերականության լեզվաբանական և մեթոդական տիպականացման առանձնահատկությունները,

- հայտորոշման արդյունքում սովորողների տիպական սխալների վերլուծության միջոցով բացահայտվեն իրադրային քերականության ուսուցման տիպական դժվարությունները,

- մշակված մոդելը ապահովի իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես հաղորդակցական լեզվական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչ:

Ըստ նպատակադրման և առաջ քաշած վարկածի առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել մասնագիտական գրականությունը, հատկապես լեզվաբանական, հոգեբանամանկավարժական, լեզվադիդակտիկական, մեթոդական մոտեցումները՝ իրադրային քերականություն հասկացության վերաբերյալ անգլերենի մասնագիտական ուսուցման գործընթացում,

2. կատարել անգլերենի և հայերենի իրադրային քերականական երևույթների զուգարդական-տիպաբանական վերլուծություն,

3. հայտորոշման միջոցով բացահայտել սովորողների անգլերենի իրադրային քերականության տիրապետման մակարդակը և ուսուցման ընթացքում հանդիպող տիպական դժվարությունները,

4. ստեղծել վարժությունների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական հմտությունների ձևավորմանը՝ հաշվի առնելով հայալեզու ուսանողների ուսուցման դժվարությունները:

5. մշակել իրադրային քերականության ուսուցման գիտամեթոդական նոր համակարգ, մանկավարժական փորձառությամբ հիմնավորել առաջարկվող վարժությունների համակարգի կիրառելիությունն ու արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են տարբեր տեսություններ և հայեցակարգեր ներկայացնող աշխատություններ՝ հաղորդակցական-ճանաչողական (Մ.Գ. Աստվածատրյան (2010), И.М. Берман (1994), И.Л. Бим (1992), В.А. Бухбиндер (1986), Р. Allen (1986), N. Spada (2007), կոմպետենտային մոտեցման (А.Г Бермус (2005), И.А. Зимняя (2004), Е.Н. Соловова (2010), П.В. Сысоев (2012), А.В. Хуторской (2008), N.Chomsky (1966), CEFR 2001), կորպուսային լեզվաբանության (O'Keefe, McCarthy & Carter (2007), Collins-COBUILD (1990), G. Leech (2000), G. Nelson (1996)), խոսքային ակտերի տեսության (J. Austin (1986), M. Halliday (1997), D. Hymes (1972), J. Searle (1969), D. Wunderlich 1997), լեզուների դասավանդման շրջանակներում գործարանական, գործառական, հաղորդակցական-ճանաչողական, միջմշակութային մոտեցումների (Р. П. Мильруд (2002), Е.И. Пассов (2007), А.В. Щепилова (2005), В.В. Сафонова (2004), J.C. Béacco (2010), D. Newby (2006), A. Ramos and A. Luque (2010), J. Sheils (1998), W. Westera (2001) և այլք):

Հետազոտության մեթոդները.

Տեսական՝ լեզվաբանական, հոգեբանամանկավարժական և լեզվադիդակտիկական մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,

էմպիրիկ՝ դիտարկում, ուսանողների անկետավորում, հարցում, հարցազրույց, թեստավորում (հայտորոշիչ և ստուգիչ), փորձարարական ուսուցում,

վիճակագրական՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը.

Ազգային բուհական կրթության մասնագիտական դասընթացում

- ստեղծվել է անգլերենի իրադրային քերականության ուսուցման գիտամեթոդական համակարգ՝ ուղղված իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը,

- իրականացվել է անգլերենի և հայերենի իրադրային քերականական կառույցների զուգադրական-տիպաբանական վերլուծություն,

- ճշգրտվել է ուսուցման բովանդակությունը՝ իրադրային քերականական նյութի մոդելավորման հիման վրա,

- բացահայտվել են ազգային լսարանում անգլերենի իրադրային քերականության ուսուցման տիպական դժվարությունները,

- ներդրվել են քերականական նյութին ծանոթացման/բացատրության, վարժանքի միջոցով ամրապնդման, քերականական մեխանիզմների ձևավորման և ստուգման տեխնոլոգիաներ,

- ստեղծվել և փորձարարական ուսուցմամբ հիմնավորվել է ինտերակտիվ վարժությունների համակարգ՝ ուղղված անգլերենի իրադրային քերականության յուրացմանը և քերականական մեխանիզմների ձևավորմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսությունն ու պրակտիկան հարստացել են իրադրային քերականության ուսումնասիրության վերոնշյալ ձեռքբերումներով՝ հաշվի առնելով բուհական կրթության մասնագիտական դասընթացում անգլերենի իրադրային քերականության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները:

- հստակեցվել են «քերականություն» հասկացության ծավալն ու իմաստային ոլորտը, նպատակներն ու գործառույթները,

- բացահայտվել են քերականորեն գրագետ և ազատ հաղորդակցվելուն խոչընդոտող դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները,

- անգլերենի իրադրային քերականության ուսուցման մշակված տեսական դրույթները կարող են հիմք ծառայել այլ օտար լեզուներ դասավանդելիս:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքները կարող են

- կիրառվել անգլերենի գործնական պարապմունքների անցկացման ժամանակ, ինչպես նաև բուհերում օտար լեզուների մեթոդիկայի տեսական դասընթացների և սեմինար պարապմունքների ընթացքում,

- ընդգրկվել նոր ուսումնական ծրագրերում, դասագրքերում, մեթոդական ձեռնարկներում,

- օգտագործվել դասախոսների և ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիայի բարելավմանն ու բարձրացմանն ուղղված վերապատրաստումների ընթացքում,

- համահեղինակությամբ ներկայացված ձեռնարկը կարող է ծառայել որպես անգլերենի իրադրային քերականության ուսուցման լրացուցիչ ռեսուրս:

Հետազոտության հիմնական փուլերը.

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում (2011-2012) իրականացվել է գիտական գրականության ուսումնասիրություն, քննության են առնվել քերականության ուսուցմանը վերաբերող լեզվաբանական, հոգեբանամանկավարժական և մեթոդական աշխատությունները: Կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, զուգադրական-տիպաբանական վերլուծություն, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածն ու պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները: Հստակեցվել են հայտորոշման և փորձարարական ուսուցման փուլերը, փորձարարական և ստուգողական խմբերում ներգրավված ուսանողների քանակը:

Երկրորդ փուլում (2012-2013) մշակվել են հայտորոշիչ թեստավորման ընթացակարգը, միջլեզվական քերականական սխալների կանխման և հաղթահարման ռազմավարությունը, անցկացվել է նախաթեստավորում, ստեղծվել է վարժությունների համակարգ՝ ուղղված քերականական մեխանիզմների և իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանը:

Երրորդ փուլում (2013-2015) ստեղծվել է անգլերենի իրադրային քերականության ուսուցման վարժությունների նոր համակարգ, նախապատրաստվել և իրականացվել է փորձարարական ուսուցում, ստացված տվյալները վերլուծվել, համակարգվել և ընդհանրացվել են:

Պաշպանության ներկայացվող դրույթները.

1. Քերականությունը բարդ, բազմիմաստ, բազմագործառության իրադրային է, որը դիտարկվում է՝

ա) լեզվաբանության տեսանկյունից՝ տեսական/գործնական, պատմական, տիպաբանական, նորմատիվ, գործառական, ճանաչողական (cognitive): Վերջինս հակադրվում է խոսքային, հաղորդակցական, իրադրային քերականությանը, որը «սպասարկում է» հաղորդակցությանը՝ լայն իմաստով:

բ) մեթոդական առումով՝ ակտիվ/պասիվ (քերականական նյութի յուրացման), պրոդուկտիվ/ռեցեպտիվ (գործողությունների տիրապետման), ավանդական/նորմատիվ, գործառական/իրադրային տեսանկյուններից:

2. Անգլերենի և հայերենի իրադրային քերականության զուգադրական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ենթադրություններ անել դրական և բացասական (transfer, interference) ներթափանցման դաշտը սահմանելու առումով, ինչի հիման վրա կատարվում է համապատասխան քերականական երևույթների մեթոդական տիպականացումը՝ հստակեցնելով ուսուցման դժվարությունների տարբեր աստիճանները:

3. Քերականության ուսուցման գործընթացը կառուցվում է համակարգված-կոնցենտրիկ եղանակով, որն արդյունավետ է բուն նյութի յուրացման, քերականական մեխանիզմների, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացման առումով (В. Н. Богородицкая (1974)):

4. Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանն ուղղված քերականական մեխանիզմների և իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորումն ապահովվում է վարժությունների համակարգի և համապատասխան ուղղվարության միջոցով:

Հետազոտության փորձաքննությունը և ներդրումը.

Աշխատանքը փորձաքննությունն անցել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում: Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՊՄՀ-ի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և գերմանական լեզուների ամբիոնների միացյալ նիստում և ներդրվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում: Ատենախոսության նյութերը ներկայացվել են բուհական, միջբուհական հանրապետական և միջազգային գիտաժողովներում, որոնք նվիրված էին ժամանակակից լեզվաբանության և լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին (2011թ. հոկտեմբերի 5-6, Երևան, ԵՊՀ, 2013թ. հոկտեմբերի 17-18, Երևան, ԵՊՀ, 2014թ. փետրվարի 20-21, Երևան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, 2014թ. հունիսի 30, հուլիսի 1-2, Մեծ Բրիտանիա, Քենթրբերիի համալսարան):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են տպագրված հրապարակումներում (տե՛ս ատենախոսության սեղմագրի վերջում ներկայացված հրապարակումների անվանացանկը):

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը.

Ատենախոսությունը բաղկացած է 143 համակարգչային էջից: Այն ներառում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, գրականության ցանկ, հավելվածներ, 8 աղյուսակ, 10 զծապատկեր, 12 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում ներկայացված են հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Քերականական կոմպետենցիայի ձևավորման նախադրյալները մասնագիտական կողմնորոշման գործընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Քերականության դերն ու տեղը մասնագիտական դասընթացում»** ենթագլխում սահմանվում է «քերականություն» եզրույթը, ըստ Գ. Հելթիգի առանձնացվում են քերականության տեսակները (“A”, “B”, “C”),

իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից բացահայտվում են գործառական լեզվաբանության զարգացման միտումները:

Վերլուծական կտրվածքով ներկայացվում են հաղորդակցական քերականության շրջանակներում ձևավորված մոտեցումները:

Վերջին տարիներին մեծ տեղ է տրվում կորպուսային լեզվաբանությանը, որի հետազոտության առարկան, ի տարբերություն ավանդական լեզվաբանության, խոսքային գործունեության դրսևորման ուսումնասիրությունն է, այսինքն՝ լեզվի նկարագրությունն է այն տեսքով, ինչ տեսքով վերջինս հանդես է գալիս խոսքում՝ իրական հաղորդակցությունում: Փաստորեն խոսքը կորպուսային լեզվաբանության և իրադրային քերականության սկզբունքների համադրման և ընտրության հիմնախնդրի մասին է:

Երկրորդ՝ **«Իրադրային քերականության ծագման և զարգացման պատմությունից»** ենթազյխում քննության են առնվում իրադրային քերականության ծագման փուլերը, դասական և ժամանակակից օտար լեզուների դասավանդման հիմնական ուղղությունները: Շեշտադրվում է այն եզրահանգումը, ըստ որի՝ ուղիղ, քերականական-թարգմանական, տեսալսողական և այլ մեթոդների զարգացման շրջանակներում ձևավորվում են հաղորդակցական քերականության տարրերը: Այդ համատեքստում վերարտադրման, ընդօրինակման, շղթայի լրացման և տեղադրման, ընդլայնման և փոխակերպման վարժությունները, համադրվելով հաղորդակցական առաջադրանքների հետ, կարող են հաջողությամբ կիրառվել իրադրային քերականության ուսուցման նախապատրաստական փուլում:

Երրորդ՝ **«Քերականական կոմպետենցիան որպես հաղորդակցական լեզվական կոմպետենցիայի գլխավոր բաղադրիչ»** ենթազյխում սահմանվում է լեզվահաղորդակցական (communicative language competence) կոմպետենցիան, ըստ CEFR-ի (2001) առանձնացվում են այդ հասկացության հիմնական բաղադրիչները՝ լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական, և դրանց դրսևորումը խոսքային գործունեության տարբեր տեսակներում: Նշվում է, որ իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է լեզվի ոճական առանձնահատկությունների բացահայտում և գործառույթների որոշակի հստակացում, քանի որ հատկապես ոճական մակարդակում իրադրային քերականության միջոցով ի հայտ է գալիս տվյալ լեզվի զարգացման շարժընթացը:

Օտարալեզու խոսույթի ուսումնասիրությունը, տարբեր խոսքային իրադրություններում երկխոսությունների իրականացումը հնարավորություն են ընձեռում ակտիվացնել, ամրապնդել ընկալողական մակարդակում ուսումնասիրվող և յուրացրած քերականական նյութը, զարգացնել քերականական կառույցներն ապակողավորման և կողավորման ռեժիմում ընկալելու և գործածելու կարողություններ:

Երկրորդ՝ **« Ուսանողների քերականական կոմպետենցիայի ձևավորման դժվարությունները մասնագիտական կողմնորոշման դասընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթազյխից:

Առաջին՝ **«Անգլերենի և հայերենի քերականական կառուցվածքների զուգադրական-տիպաբանական վերլուծություն»** ենթազխում զուգադրական վերլուծությամբ բացահայտվում են հայերենում և անգլերենում նորմատիվ և իրադրային քերականության առանձնահատկությունները, կոնկրետ տիպական օրինակներով պարզաբանվում են միջլեզվական բացասական փոխներթափանցման պատճառները: Ընդ որում, անգլերեն խոսակցական կառույցները համեմատվել են մի կողմից՝ հայերենի, մյուս կողմից՝ անգլերենի նորմատիվ և իրադրային քերականական կառույցների հետ:

Մեթոդական տիպականացման տեսանկյունից կարևոր է այն, որ ուսանողները հաղթահարեն ոչ միայն միջլեզվական, այլև ներլեզվական քերականական բացասական ներթափանցման դրսևորումները: Խնդիրն ավելի է բարդանում, եթե ներլեզվական ներթափանցման դրսևորումները դիտարկվում են ոչ միայն ձևավաբանական, շարահյուսական, այլ նաև իմաստաբանական, գործաբանական մակարդակներում: Այստեղ վճռորոշ է այն փաստը, որ անգլերենը՝ վերլուծական, իսկ հայերենը կցական կառուցատիպի լեզու է՝ զարգացած թեքական համակարգով և վերլուծական (անալիտիկ) կառուցվածքով: Մի կողմից՝ օտար լեզվի ֆակուլտետի ուսանողները պետք է յուրացնեն անգլերենի քերականական երևույթները, մյուս կողմից՝ հստակորեն տարաբաժանեն ավանդական, հնաոճ, ժամանակակից կենդանի անգլերեն խոսքում գրեթե չգործածվող քերականական ձևերը հաղորդակցական ներուժ ունեցող քերականական կաղապարներից՝ առավելությունը տալով վերջիններիս: Անգլերենի և հայերենի քերականական կառույցների զուգադրական վերլուծությունը հնարավորություն ընձեռեց մեթոդական «կանխագուշակում» անել ուսանողների հնարավոր (պոտենցիալ) սխալների վերաբերյալ, ինչը հաստատվեց հայտորոշման արդյունքում:

Երկրորդ՝ **«Ուսանողների անգլերենի իրադրային քերականական կարողությունների հայտորոշիչ թեստավորում և տիպական սխալների վերլուծություն»** ենթազխում ներկայացվում են մասնագիտական դասընթացում ուսանողների (ընդհանուր թիվը՝ 231 մասնակից) իրադրային քերականական գիտելիքների մակարդակի հայտորոշմանն ուղղված թեստավորման գործընթացը, առաջադրանքները, և թեստավորման արդյունքները:

Հայտորոշիչ թեստավորման և ուսանողների տիպական սխալների վերլուծության արդյունքներից երևում է, որ ուսանողները, ծանոթանալով և յուրացնելով այս կամ այն քերականական նյութը, այնուամենայնիվ չեն գիտակցում քերականական երևույթների հաղորդակցական գործառույթն ու արժեքը: Ստացված տվյալների հիման վրա բացահայտվել են ուսանողների մի շարք տիպական սխալներ:

Համադրելով զուգադրական-համեմատական արդյունքների հետ երրորդ՝ **«Քերականության ուսուցման դժվարությունների սահմանում մասնագիտական դասընթացում»** ենթազխում տիպականացվել են քերականության ուսուցման սխալներից բխող դժվարությունները ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական մակարդակներում: Այդ

դժվարությունների հաշվառումն ու հաղթահարումը իրադրային քերականության ուսուցման ընթացքում վճռորոշ է հետագա հաղորդակցումն ապահովելու համար: Ըստ հայտորոշման տվյալների՝ ուսանողները հանդիպում են հետևյալ դժվարություններին, որոնք պայմանավորված են՝

- հայերենում անգլերենի որոշ քերականական կատեգորիաների բացակայությամբ կամ մասնակի համընկնումով,
- նորմատիվ քերականական հմտությունների ոչ լիարժեք զարգացմամբ,
- պարզ, հասարակ քերականական կառուցվածքների օգտագործմամբ, ինչը զրկում է խոսքը իրական բնականությունից:

Բացահայտված տիպական սխալները հաշվի են առնվել հաղորդակցական կարողությունների զարգացմանն ուղղված վարժությունների համակարգը մշակելիս:

«Իրադրային քերականական կարողությունների գնահատում»

վերնագրով չորրորդ ենթազլխում առանձնացվում են գնահատման հիմնական տեսակները՝ ձևավորող (formative) և ամփոփիչ (summative), ինչպես նաև քերականական թեստերի գործառույթներն ու տեսակները: Այստեղ հիշատակման է արժանի *ուսուցողական* և *սփուգողական* թեստերի երկակի գործառույթը, որի շնորհիվ միաժամանակ իրականացվում են թե՛ ուսուցումը, թե՛ ստուգումը որպես մեկ տրամաբանական ամբողջություն:

Երրորդ՝ **«Անգլերենի իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի մշակումն ու փորձարկումը»** գլուխը ընդգրկում է երեք ենթազլխու:

Առաջին՝ **«Անգլերենի քերականության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքները»** ենթազլխում հաղորդակցական-իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից քննության են առնվում անգլերենի իրադրային քերականության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքները: Այդ առումով քերականական նվազագույնը և բառապաշարն ընտրվում են ըստ հաղորդակցական սկզբունքի, որտեղ առաջնային են իրադրային ենթատեքստը, խոսակիցների հաղորդակցական մտադրությունները (communicative intentions) և սոցիալական կարգավիճակը: Սովորողները պետք է տիրապետեն քերականական մեխանիզմներին, ինչպես նաև գիտենան բառաձևերը, գործառույթները՝ հաշվի առնելով սոցիալական գործոնները և կիրառելով ինտերակտիվ տեխնոլոգիաները:

Այդ փուլում իրադրային քերականության ուսուցումը դիտարկվում է նախադասության և ասույթի մակարդակներում: Իմաստաբանական, գործաբանական և խոսութային համատեքստում համեմատություն է արվում, մի կողմից՝ հայերենի և անգլերենի համարժեք կամ անհամարժեք քերականական երևույթների, մյուս կողմից՝ անգլերենի նորմատիվ և ոչ նորմատիվ քերականական կառույցների, այդ թվում՝ շեղումների, բացառությունների միջև: Քերականական անհամարժեքության հիմնախնդիրը խոսույթի մակարդակում նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում, երբ քերականական կառույցները փոխներթափանցման պատճառ են դառնում ոչ միայն

ձևաբանական, շարահյուսական, այլ նաև գործաբանական և խոսութային մակարդակներում: Այսպիսով, փոխներթափանցման դաշտն ընդլայնվում է իրական խոսքային իրադրությունների ներգրավվման շնորհիվ:

Այս ենթազբյուրում ներկայացվում է նաև մեթոդաբանական մակարդակում անգլերենի իրադրային քերականության ուսուցման կաղապարը, ըստ որի՝ կարևորվում են բոլոր՝ ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական և խոսութային մակարդակները, լեզվադիդակտիկական և մեթոդական գործոնները՝ իրադրային քերականական կառույցների ուսուցման նպատակով:

Երկրորդ՝ **«Վարժությունների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանն ու տիրապետմանը»** ենթազբյուրում հանգամանորեն ներկայացված է իրադրային քերականության ուսուցման վարժությունների համակարգը՝ հաշվի առնելով համապատասխան խոսքային մտադրությունների, վերջիններս դրսևորող նմուշների, նրանց կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների գործածության ոլորտը: Ելնելով ընդհանուր պահանջներից՝ վարժությունների համակարգում հաշվի են առնվել՝

- ուսուցման նպատակը և խոսքային գործունեության խնդիրները,
- նյութի ներմուծման և վարժանքի համակցումը՝ ուղղված խոսքային գործունեության զարգացմանը:
- ուսուցման փուլերը և քերականական մեխանիզմների ձևավորման հաջորդականությունը:

Առաջարկված վարժությունների համակարգում առկա են մի շարք ենթահամակարգեր, օրինակ՝ ծանոթացման/բացատրության փուլի, նախապատրաստական և խոսքային, ստուգողական բնույթի վարժություններ: Իրադրային քերականական երևույթների յուրացման նպատակով առաջարկվել են վերլուծական, տեղադրման, փոխակերպման, ընդլայնման/կրճատման, հարցապատասխան և այլ խոսքասերման տիպի վարժություններ, մեծ տեղ է հատկացվել հաղորդակցական ուղղվածության վարժություններին: Քերականական մեխանիզմների ձևավորման և ավտոմատացման գործընթացը հիմք է ծառայում ինքնուրույն խոսքային գործողություն իրականացնելու համար: Նման մոտեցումը նպաստում է զարգացնող, կրթադաստիարակչական, հաղորդակցական նպատակների միաձուլմանը և ի վերջո ինտեգրմանը ուսումնական գործընթացում:

Վերջին՝ երրորդ **«Իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկում»** ենթազբյուրում ներկայացվում են փորձարարական ուսուցման նպատակները, իրականացման փուլերն ու արդյունքների վերլուծությունը:

Իրադրային քերականության ուսուցման կաղապարը հիմք է ծառայել ոչ միայն առաջարկվող մեթոդական համակարգը, այլև ուսանողների քերականական կոմպետենցիայի գնահատման չափանիշները մշակելու համար: Փորձարարական ուսուցումն իրականացվել է 2014-2015 ուս. տարվա մայիս և

հոկտեմբեր ամիսներին և 2015-2016 ուս. տարվա մարտ ամսին, ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետում:

Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 192 (107 և 85 ուսանող):

Փորձարկման ընթացքում ընդգրկվել են հետևյալ թեմաները՝ գլոբալացում և կրթություն (Globalization and Education), վարքագիծ և վարվեցողություն (Perfect behavior and Good manners), առողջություն և բարեկեցություն (Health and Well-being), ճաշակ և նորաձևություն (Taste and Fashion), լրատվամիջոցներ և քաղաքականություն (Media and Politics):

Լեզվական նյութը՝

- տվյալ թեմաներին առնչվող համապատասխան բառապաշար,
- քերականական նյութ՝ անգլերենի բայական ժամանակաձևեր՝ ներկա, անցյալ, ապառնի շարունակական (Present, Past, Future Continuous) ժամանակաձևեր և դրանց կիրառում, հատկապես քաղաքավարության ռեգիստրի շրջանակներում, ուղղակի խոսք, տեղեկատվություն (միջոցառումների ծրագրեր) ներկայացնելու համար, ներգործական/կրավորական սեռի (Indicative/Passive) գործածություն,

- խոսքային նմուշներ՝ ըստ հաղորդակցական մտադրությունների (հարցում, հետաքրքրություն, պատճառ, ճշգրտում), օրինակ՝

How's (it) going (=Are you enjoying it or being successful at it?) Գործերդ լավ են:

Why is that? (=What's the reason?) Պատճա՞ռը:

Like what, exactly? (=Can you give me an example?) Օրինակ ո՞նց:

How come (=Why? What's the reason?) Ինչո՞ւ, ո՞նց եղավ:

Փորձարկումն ընթացել է երկու փուլով՝ բուն ուսուցողական և հետփորձարարական ստուգման:

Հաշվի առնելով ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի անգլիական բաժնում կիրառվող ուսումնամեթոդական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութը՝ առաջարկվել են լրացուցիչ տեքստեր, առաջադրանքներ և վարժություններ:

Հիմնվելով մեր կողմից մշակված մեթոդական կադապարի վրա՝ փորձարարական աշխատանքների վերջում թեստավորման միջոցով անցկացվել է ստուգողական աշխատանք, որի նպատակն է եղել պարզել, թե արդյոք մշակված ռազմավարությունն ու վարժությունների համակարգը ծառայել են նպատակին, որքանով են իրացվել և կիրառվել իրադրային քերականական կառույցները հաղորդակցման ընթացքում, և որքանով է դրանց տիրապետումը նպաստել բանավոր խոսքի զարգացմանը:

Հետփորձարարական ստուգողական աշխատանքներն իրականացվել են 2015թ. հոկտեմբերին, որին մասնակցել են 94 ուսանող՝ և 2016 թ. ապրիլին՝ 85 ուսանող (ընդամենը՝ 179):

¹ Հետփորձարարական թեստավորման մասնակիցների թիվը 2015թ. պակասել է, քանզի 4-րդ կուրսի ուսանողները հետփորձարարական թեստավորման պահին արդեն ավարտել էին բուհը:

Նպատակահարմար է կիրառված մեթոդների արդյունավետությունը ավելի ակնառու ցույց տալու համար համեմատել 4-րդ կուրսի 2014-2015 և 2015-2016թթ. հետփորձարարական թեստերի արդյունքները (ուսանողների թիվը՝ 179) նախորդ 3 տարիների (2012-2013, 2013-2014, 2014-2015թթ.) հայտորոշիչ թեստավորման արդյունքների հետ (ուսանողների թիվը՝ 231):

Աղյուսակ 1.

4-րդ կուրսի ուսանողների 3 տարիների (2011-2012, 2012-2013, 2013-2014 թթ.) հայտորոշիչ թեստավորման արդյունքները

Առաջադրանք		Ուսանողների քանակ (231)			%		
		Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
Առ. 1	Գրավոր	121	56	54	52%	24%	23%
Առ. 2	Գրավոր	130	38	63	56%	16%	27%
Առ. 3	Գրավոր	128	49	54	55%	21%	23%
Առ. 4	Գրավոր	142	47	42	61%	20%	18%
Առ. 5	Գրավոր	58	35	138	25%	15%	60%
Առ. 6	Բանավոր	50	122	59	22%	53%	26%

Աղյուսակ 2.

4-րդ կուրսի ուսանողների հետփորձարարական թեստերի (2014-2015 թթ. և 2015-2016թթ.) արդյունքները

Առաջադրանք		Ուսանողների քանակ (179)			%		
		Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
Առ. 1	Գրավոր	139	20	20	78%	11%	11%
Առ. 2	Գրավոր	133	27	19	74%	15%	11%
Առ. 3	Գրավոր	140	15	22	78%	8%	12%
Առ. 4	Գրավոր	142	20	15	79%	11%	8%
Առ. 5	Գրավոր	102	28	49	57%	16%	27%
Առ. 6	Բանավոր	106	29	39	59%	16%	22%

Ինչպես ակնհայտորեն վկայում են հայտորոշման և հետփորձարարական թեստերի վերլուծության արդյունքները, զգալիորեն աճել է ուսանողների ճիշտ պատասխանների քանակը՝ մասնավորապես բարձր ցուցանիշներ են գրանցվել

(ավելի քան երկու անգամ) հաղորդակցման կարողությունների զարգացման առումով, որտեղ արձանագրվել է ուսանողների կողմից կիրառվող իրադրային քերականական մեխանիզմների ձևավորման դրական դինամիկա:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ համապատասխան փորձարարական ուսուցման վերլուծության արդյունքների ամփոփմամբ հաստատվել է աշխատանքային վարկածի հավաստիությունը, առաջարկվող կաղապարի և մեթոդական համակարգի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Մասնագիտական բուհում քերականության ուսուցման նախադրյալներն ու նորովի մոտեցումները հանգեցնում են քերականության ուսուցման հայեցակարգային դրույթների փոփոխության անհրաժեշտության: Մեր կողմից մշակված նորարարական մեթոդական համակարգը նպատակաուղղված է փոխելու քերականության ուսուցման նպատակների առաջնահերթությունները, ճշգրտել ուսուցման բովանդակությունը՝ ըստ հաղորդակցական մտադրությունների, առաջին պլան մղելով գործառնության գաղափարը, ուսանողների իրական խոսքային գործունեության կարողությունների զարգացումը:

2. Լեզվի տիրապետման տարբեր մակարդակներում վերանայվել են քերականության նվազագույնին առաջադրվող պահանջները: Լեզվի տիրապետման բարձր մակարդակներում հնարավորություն է ընձեռվում ուսումնասիրել լեզուն՝ ներառելով իրադրային քերականական կառույցներ ըստ շփման ոլորտի, կոնկրետ, իրական խոսքային իրադրությունների: Վերոնշյալ մոտեցումների համադրումը նպաստում է քերականության ուսուցման օպտիմալացմանը՝ առավել բարձր ցուցանիշներ ստանալու առումով:

3. Իրադրային քերականական նյութի յուրացման ընթացքում առաջացած դժվարությունները ենթակա են չեզոքացման ինտենսիվ վարժանքի միջոցով՝ տևական ժամանակի ընթացքում բացասական ներթափանցման ազդեցությունը հաղթահարելու համար:

4. Անգլերենի իրադրային քերականական երևույթների ուսուցման մշակված մեթոդական համակարգն ընդգրկում է՝

ա) քերականական նյութի ընտրության՝ նորովի կազմակերպված և գործնականում փորձարկված ընթացակարգը,

բ) վարժությունների համակարգը (տրոհված ըստ փուլերի և համադրված), որն ուղղված է անգլերենի քերականական մեխանիզմների ձևավորմանը, ուսանողի լեզվի իմացության տվյալ մակարդակի և հաղորդակցական (լեզվական, գործաբանական, հանրամշակութային) կոմպետենտության զարգացմանը,

զ) քերականական մեխանիզմների ավտոմատացումը, որն ըստ էության քերականական կոմպետենցիայի ուսուցման գործընթացի հիմքն է կազմում, հատկապես հաղորդակցական խնդիրների լուծման գործում:

5. Ելնելով բուհական կրթության համակարգում իրադրային քերականության ուսուցման նպատակներից՝ անհրաժեշտ է վերանայել անգլերենի ուսուցման բովանդակությունը և քերականական նյութի ընտրության սկզբունքները՝ ըստ թեմաների և իրադրությունների, առավել ընկալելի մոդելների և համապատասխան խոսքային նմուշների միջոցով:

Այսպիսով, կատարած աշխատանքի արդյունքում և փորձարարական ուսուցման միջոցով ապացուցվել է, որ մեր կողմից մշակված իրադրային քերականության ուսուցման մոդելը տվել է դրական արդյունք:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ **հրապարակումներում**.

1. Անգլերենի ածանցների համադրելիությունը, Աստղիկ 20-21, 2010-2011, Սահակ Պարթև հրատ., էջ 368-373:

2. Ուսումնամեթոդական ձեռնարկ «Բանավեճեր և հարցազրույցներ» (Ա. Բաբայանի համահեղինակությամբ) 2011, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 262 էջ:

3. Լեզվական դետերմինիզմ և հարաբերականություն, Armenian Folia Anglistika 2012, Անգլերենի միջազգային գրախոսվող ամսագիր, Լուսակն, էջ 40-43:

4. Անգլերենի իրադրային քերականական կաղապարների թարգմանության և ուսուցման մի քանի առանձնահատկությունների մասին, Երևան, ԵՊՀ, 2014թ. գիտական հոդվածների ժողովածու, էջ 202-207:

5. Անգլերենի ուսուցում իրադրային համատեքստում, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014թ. էջ 168-171:

6. Իրադրային քերականության արդյունավետ ուսուցում, Անգլիագիտական հետազոտությունների հայկական հանդես, միջազգային գրախոսվող ամսագիր, Երևան 2015, Լուսակն հրատ., էջ 99-105:

СУСАННА ХУРШУДОВНА БАГДАСАРЯН

ОБУЧЕНИЕ СИТУАТИВНОЙ ГРАММАТИКЕ В ПРОФЕССИОНАЛЬНО-ОРИЕНТИРОВАННОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - "Методика преподавания и воспитания" (английский язык).

Защита диссертации состоится 22-го сентября 2016г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Стремительные процессы глобализации и технологизации и межкультурной интеграции на современном этапе развития общества диктуют необходимость существенных изменений и в сфере образования, в частности в плане овладения иностранными языками.

Опыт работы со студентами факультета иностранных языков показывает, что они усваивают нормативную грамматику на разных этапах обучения, однако у них возникают определенные трудности, связанные с изучением ситуативной, коммуникативной грамматики.

Важно подчеркнуть, что коммуникативный подход предполагает построение курса методики преподавания грамматики на функциональной и дискурсивной основе, в том смысле, что грамматические явления изучаются и усваиваются не как формальные средства, а как средства выражения мыслей, отношений и коммуникативных интенций.

Таким образом, актуальность исследования обусловлена необходимостью разработки методики обучения ситуативной грамматике в рамках коммуникативной-когнитивной и межкультурной парадигмы.

Целью исследования является разработка методики обучения ситуативной грамматике на основе современных лингвистических, психолого-педагогических, методических и коммуникативно-когнитивных подходов с учетом типичных трудностей обучения иностранным языкам в национальной (армянской) аудитории.

Задачи исследования.

1. Изучить и проанализировать специальную литературу, в частности лингвистические, лингводидактические подходы к понятию "ситуативная грамматика", применительно к профессиональному курсу английского языка.

2. Провести сопоставительно-типологический анализ ситуативно-грамматических явлений английского и армянского языков с целью методического прогнозирования возможных трудностей усвоения на основе несовпадения или отсутствия грамматических категорий в контактирующих языках.

3. Установить посредством диагностирующего тестирования степень владения студентами английской ситуативной грамматикой и выявить типичные трудности, возникающие в процессе обучения.

4. Разработать новую научно-методическую систему обучения ситуативной грамматике.

5. Создать систему упражнений, направленную на формирование ситуативных грамматических навыков, с учетом трудностей обучения армяноязычных студентов.

6. Разработать систему упражнений и посредством опытного обучения обосновать ее применимость и эффективность на практике.

Научная новизна исследования:

В национальном вузовском профессионально-ориентированном курсе создана и апробирована на практике научно-обоснованная методическая система обучения английской ситуативной грамматике, направленная на формирование грамматических механизмов и развитие грамматической компетенции на основе структурного, функционального, дискурсивного и коммуникативного подходов.

Проведен сопоставительно-типологический анализ ситуативно-грамматических конструкций английского и армянского языков. Пересмотрено содержание обучения грамматическому материалу на основе моделирования. В целом, установлены типичные трудности обучения ситуативной грамматике в национальной аудитории, технологии ознокомления/объяснения, формирования грамматических механизмов и контроля усвоения грамматического материала.

Путем опытного обучения обоснована эффективность системы интерактивных упражнений, направленных на усвоение ситуативной грамматики английского языка и формирование грамматических механизмов.

Теоретическое значение исследования

С учетом особенностей и трудностей обучения ситуативной грамматике английского языка

- уточнен семантический объем понятия “грамматика”,
- выявлены трудности, препятствующие грамотной и свободной коммуникации, а также пути их преодоления на основе коммуникативно-когнитивных стратегий обучения,
- теоретические положения обучения ситуативной грамматике английского языка могут лечь в основу разработки курса обучения иностранным языкам.

Практическое значение исследования.

Результаты исследования могут быть использованы на практических занятиях английского языка, в теоретическом курсе методики преподавания иностранных языков, семинарских занятиях, а также включены в новые учебные программы, учебники, методические пособия, использованы на курсах повышения квалификации преподавателей и учителей иностранных языков, направленных на улучшение и повышение уровня их профессиональной компетенции. Учебное пособие, апробированное в процессе экспериментального обучения, может быть использовано как дополнительный учебник обучения английской ситуативной грамматике.

Апробация результатов исследования.

Основные положения и результаты исследования обсуждались на заседании кафедры методики преподавания иностранных языков в АГПУ им. Х. Абовяна.

В результате опытного обучения на факультете иностранных языков АГПУ им. Х. Абовяна обоснована эффективность предложенной научно-методической системы обучения ситуативной грамматике английского языка. Результаты исследования могут быть успешно внедрены в профессионально-ориентированном курсе английского языка.

Структура и объем диссертации - Диссертация объемом 143 страниц компьютерного текста состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. В ней содержатся 8 таблиц, 12 схем и 10 диаграмм.

По теме диссертации имеется 6 публикаций.

SUSANNA KHURSHUD BAGHDASARYAN

SITUATIONAL GRAMMAR INSTRUCTIONS IN
PROFESSIONALLY-ORIENTED ENGLISH COURSE

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 - "Teaching and Education Methodology" (English).

The defence of the thesis will be held at 12⁰⁰ on September 22, 2016, at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, 17 Tigran Mets ave., Yerevan.

SUMMARY

The relevance of the research: The swift and overwhelming processes of globalization, technological changes and intercultural integration which are on the way at the current stage of the society development, imply crucial changes in the sphere of education, and the instruction and command of foreign languages in particular.

The experience of teaching at the Faculty of Foreign Languages has proved that students take up normative grammar at different stages of their learning, yet, they come across certain difficulties when facing the necessity to implement situational, communicative grammar.

It is important to emphasize that the communicative approach assumes teaching grammar on the functional and discourse basis, i.e. grammatical phenomena are being studied and acquired not as formal units of language structure, but rather as means of expressing thoughts, attitudes and communicative intentions.

Thus, the relevance of the research is justified by the necessity of developing the methodology of teaching situational grammar within the communicative-cognitive and intercultural paradigms.

The aim of the research is to develop a methodology of teaching situational grammar based on contemporary linguistic, psychological, pedagogical, methodological and communicative-cognitive approaches, taking into account the typical difficulties of foreign language teaching in the national (Armenian) audience.

The objectives of the research are:

1. To study and analyze the relevant scientific literature, along with the linguistic, methodological approaches to the notion of "situational grammar", applied to the professional course of English in particular;
2. To carry out a comparative-typological analysis of certain situational and grammatical phenomena present in the English and Armenian languages, having the

goal of making methodological predictions of possible difficulties which may arise during the foreign language acquisition, based on the differences of usage or absence of certain grammatical categories in the contact languages;

3. To reveal the students' level of command of English situational grammar through diagnostic tests, identifying common difficulties encountered in the learning process;

4. To develop a new methodological system of teaching situational grammar.

5. To create a system of exercises aimed at the formation of situational grammar skills, taking into account the difficulties of teaching for Armenian speaking students.

6. To develop and justify the feasibility and effectiveness of the represented system of exercises in practice.

The scientific novelty of the research:

A scientifically-based methodological system of teaching English situational grammar has been created and approved while conducting professional courses at a national institution of higher education, which is aimed at forming and developing situational grammatical competence based on structural, functional, discursive and communicative approaches.

A comparative-typological analysis of situational grammatical constructions in English and Armenian has been carried out. The content of teaching situational grammar on the basis of modelling it has been revised. On the whole, it determines a typical set of common difficulties connected with teaching and learning English situational grammar in the national settings, the technologies of familiarizing / explaining, consolidating and assessing/evaluating the grammatical material have been determined.

Through skillful experimental teaching the efficacy of the interactive exercises aimed at the acquisition of situational English grammar and the formation of relevant grammatical mechanisms has been proved.

The theoretical value of the research:

Taking into consideration the peculiarities and difficulties of teaching English situational grammar, the research

- determines the semantic field of the concept of "grammar",
- reveals the difficulties, hindering competent and free communication as well as the ways to overcome them by implementing a communicative-cognitive learning strategies,
- developed theoretical principles of learning situational English grammar may underlie the course of teaching foreign languages.

The practical significance of the research:

The results of the research can be used in the practical course of English, as well as in conducting seminars and theoretical courses of foreign language teaching methodology. They can be included in the new curriculum, textbooks, teaching and

learning aids, as well as in teachers' training courses aimed at improving and enhancing their professional competence. The manual, tested and approved in practice, can be used as a supplementary textbook teaching situational English grammar.

Structure and volume of the thesis:

The content of the study is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. It contains 8 tables, 12 charts, 10 diagrams. The total number of pages is 143:

Six publications (methodological manual (co-author A. Babayan) and 5 articles) have been published on this topic.

A handwritten signature in black ink, appearing to be 'E. Babayan', located in the lower right quadrant of the page.

